

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 5 կոպեկով:  
Թիֆլիսում գրվում են միմյանի կեղծագրություն մեջ:  
Ոտարարությունները բխում են ուղղակի  
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ  
(Բայց կիրակի և տոն օրերից)  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:  
Յայտարարութիւնների համար զմարում են  
խորանայն ըստին 2 կոպեկ:

## ՄՇԱԿ

### ԼՐԱԳԻՐ ՔՈՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. Ե. Ն.

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Նր հրատարակիչն է Նոյն զրկրով և Նոյն պրոգրամմայով ԱՄՆԵՆ ՕՐ (բայցի տուն և տոններին հե-  
տեակ օրերից):  
ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յոգևածներ, III Ներ-  
քին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետոն և  
Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:  
ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կես տարվանը 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ.,  
երեք ամս. 3 ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ:  
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցեով. Тифлисъ, редакція «Мшакъ».  
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՐ ԱՐՄԵՐՈՐԴ

#### ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

«Գօրոս» լրագրի յօդուածը.— Ներքին տե-  
սուածիւն: Նամակ Ալեքսանդրապոլից: Ներքին  
լուրեր.— Արտաքին տեսութիւն: Յրան-  
սիա: Արքայա. Հրաւեր և համայն ուսումնական  
ազգային.— Շնչակի հեռագիրներ.— Յայտարար-  
ութիւններ.— Բանասիրական: Գաւթի բէկ:

#### «ԳՈՂՍՍ» ԼՐԱԳՐԻ ՅՕԳՈՒԱԾ

Ներկայ թիւի № 6 մէջ ուս  
«ГОЛОСЪ» լրագիրը նուիրել է մի  
ընդարձակ առաջնորդող յօդուած  
որ մի մանրամասն տեսութիւն  
է կազմում 1880 թիւին Ասիա-  
յում պատահած քաղաքական  
անցքերի: Յօդուածը մեզ համար  
նրանով նշանաւոր է, որ նրա մէջ  
խօսվում է և հայոց խնդրի մա-

սին, և այն էլ շատ որոշ և հա-  
մակրական ձևով:

Նախ և առաջ ուս լրագիրը  
խօսում է Ռուսաստանի յարա-  
բերութիւնների մասին Չինաս-  
տանի հետ, յետոյ անցնում է  
առհասարակ ուսաց քաղաքա-  
կանութեանը Միջին-Ասիայում,  
մանրամասնաբար նկարագրում է  
և Անգլիայի քաղաքականութեան  
եղանակը Ասիայում, խօսում է  
այն անաճողութիւնների վրա, որ  
Անգլիան ունեցաւ անցեալ տարի  
Ալգանիստանում և վերջապէս  
անցնում է Պարսկաստանի մէջ  
1880 թիւին պատահած քաղա-  
քական տխրալի անցքերի տե-  
սութեանը:

#### ԳԱՒԻԹ ԲԷԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

—

Ժ. Գ.

Առաօտեան չալարեանների ամբողջ ցեղի մէջ  
լուր տարածվեցաւ, թէ մէլիք Յրանդիլը ընդու-  
նել է մահմեդականութիւն. բայցը հետաքրքր-  
վում էին, բայցը ուրախանում էին, որ հայերից  
մի այդպիսի նշանաւոր մարդ մտաւ իսլամի դիր-  
կը, և հաւատացած էին, որ շատերը կը հետևե-  
նրա օրինակին: Այդ միջոցին Միւրին զեռ նոր  
էլ զարթել, և փաթաթված մտաբանայ նուրը  
պիտանելիքի մէջ, նստած էր իր վրանում, գոր-  
դի վրա: Նա պատահած անցքից տեղեկութիւն  
չունէր: Աղախիմը բերել էր նրա մօտ փոքրիկ երե-  
կային, որի հետ խաղում էր զթոտ մայրը: Ֆա-  
թիման—այդպէս էր երեկայի անունը—այս ա-  
ռաւոտ սովորել էր մի նոր հանաք իր աղախիմից:  
Երբ աղախիմը չարժում էին նրա առջև, նա բա-  
ական ծաղրական երես շինելով, արտասանում  
էր. «ան... ան...»: Այդ խաւական զուարճաց-  
նում էր դժբախտ մօրը:

Այդ միջոցին տխուր, բազմահոգ զէմքով մտաւ  
Միւրին վրանը ներքինապետ Ամէլը: Նրա սո-  
վորութիւնները այն աստիճան ծանօթ էին տիկ-  
նային, որ տեսնելով նրան վատ տրամադրութեան  
մէջ, իսկոյն հարցրեց:

— Ի՞նչ է պատահել:  
— Շատ վատ բան, պատասխանեց ծերունին և  
սկսեց պատմել բոլորը ինչ որ լսել էր մէլիքի  
մասին:

Ժողովրդի ֆանտազիան արդէն տուել էր անց-  
քին բոլորովին գերբնական կերպարանք: Պատ-  
մում էին, թէ մէլիքը հրեշտակների թիւերի վրա  
տարվել էր մինչև հինգերորդ երկինքը. այն-  
տեղ խօսակցութիւն էր ունեցել Մուհամմէդի և  
Ալիի հետ. յետոյ ցոյց էին տուել նրան զրախտը  
ու դժոխքը, ասել էին՝ զրանցից որը կամենում  
ես ընտրիր: Մէլիքը ընտրել էր զրախտը: Յսած  
զաւով երկինքից, նա անմիջապէս գնացել էր ի-  
մամի մօտ: Իմամը նրա երեսի վրա լոյսի ճա-  
ճանչներ էր տեսել, և նրա առջևը ընկնելով  
երկրպագութիւն էր տուել: Յետոյ նրան նստաց-  
րել էր իր տեղը, և ինքը նստել էր նրանից  
ցած, ասելով, թէ «ինձ պէտք է քեզ սպասաւոր-  
ութիւն անել, դու աւելի սուրբ ես, քան թէ  
ես»: Յետոյ իմամը հրամայել էր, որ ընթրիք  
տան, բայց ընթրիքը ուշացրել էին: Այդ ժա-  
մանակ մէլիքը «սալավաթ» \*) էր քաշել երեսին,  
և նոյն վայրկեանում երկինքից ցած էր իջել մի  
սեղան լի ամեն տեսակ անուշահամ կերակուր-  
ներիով և այլն:

— Այդ բոլորը հին հեքիաթներ են, ծերունի  
ներքինապետի խօսքը կարեց Միւրին, — դու այն  
աստ, մէլիքը այժմ որտեղ է:

— Նա գտանվում է իմամի մօտ, պատասխա-  
նեց ծերունին խռովեալ ձայնով. — այսօր  
\*) Սալավաթը մահմեդականների մօտ փոխա-  
րինում է այն արարողութեանը, որ քրիստոնէսա-  
ները կատարում են երեսը խաչակրքելով:

Պարսկաստանի գրեթէ ան-  
ընդհատ երկդիմի քաղաքակա-  
նութիւնը և առհասարակ Պարս-  
կաստանի թուլութիւնը, ասում  
է «Գօրոս» լրագիրը, հարկադրում  
են Ռուսաստանը ընդունել քա-  
ղաքականութեան մի նոր ձև  
այդ ափական պետութեան վե-  
րաբերութեամբ: Այդ պատճա-  
ռով, ուս լրագրի կարծիքով,  
վերջին ժամանակները Ռուսաս-  
տանի հարաւային սահմանազուխ  
երկրի, Արևիկան և Փոխարքա-  
յութեան պարտաւորութիւնները  
սուտել քաղաքեալ գարձան:  
Ռուսի այդ պարտաւորութիւն-  
ները իրագործելու համար, աւե-  
լացնում է մայրաքաղաքի թեր-  
թը, հարկաւոր է համերաշխ և  
միանման գործողութիւն հաստա-  
տել կովկասեան վարչութեան և  
ուսաց կենտրոնական կառավա-  
րութեան մէջ, որով կատարեալ  
սերտ կապ կը կապվի այդ գոր-  
ծողութիւնների և Ռուսաստանի  
ընդհանուր ափական քաղաքա-  
կանութեան վերաբերեալ ուրիշ  
խնդիրների մէջ: «Պարսկաստանի  
ակներև քայքայվելը և թիւր-  
քաց իշխանութեան թուլանալը  
Փոքր-Ասիայում, անտարակոյս  
պէտք է նոր տեղական քաղա-  
քական խնդիրներ առաջ մղեն,  
ինչպէս օրինակ քիւրդերի խնդիրը  
և մի աւելի նշանաւոր խնդիր,—

այն է հայոց խնդիրը, որի վրա  
առանձին ուշադրութիւն պիտի  
դարձնալի:»

«Հայոց ազգը, շարունակում  
է ուս թերթը, որ ունի իր  
պատմութիւնը, իր գրականու-  
թիւնը, իր սնցեալի յիշատակ-  
ներն ու արձանները, մի ազգ,  
որ պարունակում է իր մէջ մեծ  
կենսական ոյժեր, անկասկած ի-  
րաւունք ունի անկախ գոյութեան  
վրա: Մի նոր հայոց պե-  
տութեան ստեղծելը մեր  
Անգլիկոկաթի հարկանութեամբ,  
ունի մի մեծ շահ Ռուսաստանի  
համար:»

Արջացնելով իր յօդուածը  
«Գօրոս» լրագիրը ասում է որ  
անցեալ տարուց սկսած ափա-  
կան ազգերը մի նշանաւոր քայլ  
արին ընդհանուր մարդկային  
կեանքի հետ միանալու ճանա-  
պարհի վրա: Արձակը ընտրել է  
երկու պետութիւններին, Ռու-  
սաստանին և Անգլիային, Ասիայի  
և Աւրօպայի մէջ միջնորդների  
գերը կատարելու համար: Այդ  
պատճառով ցանկալի է որ այդ  
երկու մեծ պետութիւնները ա-  
սիական քաղաքականութեան վե-  
րաբերութեամբ ձեռք ձեռքի  
տուած ընթանային և նրանց եր-  
կուսի մէջ համաձայնվելը այդ  
միջնորդների դերում, ներկայաց-  
նում է ներկայ տարվայ քաղա-

քան թանգաղին չէր կարող լինել նրա համար,  
որպէս մահմեդականութիւն ընդունելը.— Բայց ես  
լսում եմ մի ուրիշ բան ես:

— Ի՞նչ բան, հարցրեց անհամբերութեամբ տի-  
կինը:

— Ասում են՝ մէլիքը խոստացել է իմամին  
կնուցեան տալ իր աղջիկը:

— Նա նոյնն է անում, ինչ որ արեց իմ ու-  
րացող հայրը... խօսեց տիկինը դառնութեամբ.  
— Եթաւ նրա աղջիկը շատ փոքր է, զեռ ութն  
տարեկան է:

— Բիշ է պատահում, որ զրանից աւելի փոքր  
հասակով աղջիկներ առնվում են մահմեդական-  
ների հարեմաւաններում: Զեռ յայտնի է, տի-  
կին, որ այդ անհաւատները մի ուրիշ բարեպաշ-  
տութիւն են համարում իրանց տունը լցնել բազ-  
մաթիւ կնիկներով: Զարմանալին այն չէ, որ  
աղջիկը փոքր է, զարմանալին այն է, որ  
նրա հայրը տալիս է մի փոսած, մաշված ծերու-  
կի, որ իր բոլոր յոյսը դրել է մի խաբեալ գէր-  
վիշի «մաջունների» վրա, որ նրանով վերադարձ-  
նէ իր մահկանութիւնը:

Տիկինը գործեալ ընկաւ մտածութիւնների  
մէջ: Հանգամանքները շատ վատ փոփոխութիւն  
ստացան: Եթէ գործը կախված լինէր իրանից  
միայն, գուցէ նա կարող կը լինէր ամեն կերպ  
զարձնել: Բայց այժմ գործի մէջ խառնվեցաւ մի  
հզօր անձն— իմամը, որին ամբողջ ցեղը պաշ-  
տում էր, որից ինքը խանը գողում էր: Ի՞նչ  
կարելի էր անել նրա հետ: Նա ինչ որ խնդրե-  
լու լինէր խանից, վերջինս չէր կարող չը կա-  
տարել: հակառակ դեպքում, մի խօսքով ամբողջ  
ցեղը կապտամարտնէր նրա դէմ: Մահմեդա-

### Քական խնդիրների ամենանշանա- ւորներից մինը:

Վ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՂԵՔԱՍԿՐԱՊՈՒՅՑ

Յունվարի 5

Որքան դանկ սպասուածքներն է գործում մարդու վրա, նոր նա մի փոքր ուշադրութեամբ կարգում է մեր պարբերական հրատարակութիւնները և մտածում նրանց ներկայ գրութեան վրա: Կրթը, անձնականութիւն, բարեգործութիւն, չար նախանձ, հայտնաբերում, — ահա սրանք են նրանց ներկայ նշանաբանը: Մեր հասարակական գործիչները, մեր լուսաւորված, բարձր ուսում ստացած անձնաւորութիւնները, մեր այսպէս ասած, մտաւոր և բարոյական զարգացման առաջնորդները չար նախանձից թելադրված՝ այժմ լրացութիւնը իրանց անսանձ կրքերի և անձնական թշնամութիւնների գէնք են շինել հակառակորդին վերք տալու համար: Նրանք չեն պատկառում իրանց կրօնով, չեն խնայում մինչև անգամ հասարակական այդ ամենակարեւոր, ամենատարբեր ճիմարկութիւնը ազգականը իրանց տմարդի և զարգացման վարձուքով, վայր գցել նրանց վարդի օտար աղբերի առջև և այդպէսով ցոյց տալ լուսաւորված ազգերին մեր ազգի մտաւոր և բարոյական զարգացման ստոր աստիճանը...

Մեր համարված ենք, որ մի ընթացքով, եթէ մի փոքր լուրջ մտք է հետևում և քննում մեր մասնավոր այժմեան ընթացքը, ուղղակի կարող է ասել, որ, չնորձի մի յետադէմ և խաւար մասնակի, լրացութիւնը այժմ «մուշտիկու» ասպարէզ է գործել: Այս, վերջացու թիֆլիսում իսկական մուշտիկուրը, հանդէս եկաւ այժմ գրականական մուշտիկուրը, միայն այն դանազանութեամբ՝ որ առաջնում մասնակցում էին անկրթ, անուս, գաղանարար կիսաանաս, իսկ այժմ — ինչպէս ճշմարիտ նկատում է «Մշակը», ուսում առած կիսանասեր:

Այդ ուսում առած կիսանասերը փոխանակ քննելու գրուածքը, ցոյց տալու նրա սխալ և ուղիղ կէտերը, փաստերով ներքեւում նրա մէջ առած զատուածութիւնները, նրանք իրանց պարտականութիւն են համարում իրանց ամենաազոտութեանը միջոցներով և ձեռքով չօչալու այդ գրուածքի հեղինակի պատիւը, արձանագրել նրա վարած կեանքի ձեւերը, ճիմնելով այն աղայական և խաւարական կարծիքի վրա, որը այս մտ օրերումս յայտնեց «Մեղուի» մէջ մի իր աւարա ն:

Կանները աւելի կաշկանդված էին կրօնի և նախապաշարունակներին կապանքներով, քան մարմնաւոր բռնապետի շղթաներով: Այս պատճառով կրօնի ներկայացուցչի խօսքը համեմատաբար աւելի մեծ ազդեցութիւն ուներ նրանց վրա: Գրա համար խանր օտարված էր միշտ բարեկամութիւն պահպանել խմորի հետ և կատարել նրա ամենափոքր քանահատկութիւններն անգամ:

— Գու հաստատ դիտում, հարցրեց տիկինը, որ խանր խոտացել է Գնուաղի և Բարգիւշատի կառավարութիւնը մէլքիքի յանձնել:

— Գիտեմ, պատասխանեց ներքեւագետը, — չառ էլ ցանկանար չէր կարող չը յանձնել, քանի որ մէջ տեղում կայ խմորի նման մի միջնորդ: Ասում են, այսօր մէլքիքի թիֆլիսական խորհուրդը կատարվելուց յետոյ, խանր կը հագցնէ նրան իր նոր պաշտօնի խաւար թի:

Յուսահատութեան թախիծը տիրեց տիկինը սրտին: Նա տոնակոխ արեց իր հօր փառասիրութիւնը Գնուաղի և Բարգիւշատի իշխանութիւնը ձեռք բերելու մէջ, զխաւարակայն այն մտքով, որ այդ երկու գաւառները միայն իր սիրելի Ստեփաննոսին, որ նրանց օրինաւոր տէրն էր: Նա ցանկանում էր տեսնել այդ պատանի իշխանագինի կրկին տիրացած Շահումանների թողած ժառանգութեանը, որ նոյն իսկ հայերի դաւաճանութեամբ յափշտակվեցաւ բռնակալի ձեռքով: Նա ցանկանում էր, որ բարի, ազնուամտ Ստեփաննոսի հովանաւորութեան տակ պատասխարվէին հազարաւոր թշուառներ, որ մայրում, այրում, խորովում էին տիրող անգթութիւնից: Բայց այդ բոլոր ցանկութիւնները ոչնչացան: Այժմ աւելի, քան թէ առաջ,

Մեր կրթը, չէինք կարող սպասել այդպիսի լիրք և մի և նոյն ժամանակ լողկալից զուրկ զատուածութիւններ բարձր ուսում ստացած անձնաւորութիւններից, կարծեմ որ նրանք գէթ հասկացած կը լինեն գրականութեան վտանգը: Նախկինը, բայց զժողովրդար մենք սաստիկ սխալված տեսնումք մեզ մեր կարծիքների մէջ, երբ միմեանց ետեւից հանդէս եկան մի քանի բարձր ուսում ստացած պարզմունք և սկսեցին վայր ի վերոյ գրուածքներով լցնել խաւար լրագրի թերթերը: Այդօրինակ գրուածքները, կարծես, ցոյց են տալիս, որ խմբագրող կամեում է մի նոր ուղղութիւն տալ իր թերթին, — այն է որ եթէ մէկը կը հաճարձակի գատուածութիւն տալ նրա գործունէութեան մասին, իսկույն և եթէ կը նկարագրվի իր թերթի մէջ նրա կեանքը, և այդպիսով նա պատժած կը համարի այն մարդուն, որ յանդգնել է ցոյց տալ նրա գործունէութեան սխալ և վատ կողմերը: Այդպէս ահա լոյս է տեսնում «Մեղուի» 94 համարում Ալեքսանդրապոլից մի նամակ, որը կրում է բարձր ուսման հօտը ասած մի անձնաւորութեան Յ. Օ. կեղծ տոտրագրութիւնը: Այդ Յ. Օ. նամակագիրը փոխանակ քննելու մեր գրուածքը, ցոյց տալու մեզ նրա մէջ արած զատուածութիւնների սխալ կէտերը, ուղղակի սկսել է զրել մեր կեանքի նկարագրող, մեր ուսման աստիճանը, յայտնելով այն միտքը թէ ինչպէս կարող է մի մարդ հրապարակաւ յայտնել իր կարծիքը մի որ և է հարցի վերաբերութեամբ, երբ նա չէ վերջացրել իր ուսման ընթացքը բարձրագոյն դպրոցների պատերի մէջ: Յ. Օ. կարծիքով միայն այն մարդը կարող է գատուածութեան տալ որ և է մի հարցի վերաբերութեամբ, որը համալսարանի մօտից անցած և նրա հօտը առած կը լինի, և եթէ այդ մարդը սխալ էլ գործի, այնու ամենայնիւ յարգելի պիտի լինի այդ սխալը պ. Յ. Օ.-ին, որովհետեւ այդ սխալ գործողը իր նման բարձր ուսում ըստացած անձն է... Այսպիսի գատուածութիւններ լսելուց յետոյ, մենք հետեւաբար պիտի դանք այն եղբակացութեանը, որ եթէ մի որ և է ճիմարութեան, մի որ և է հասարակութեան զեկավարը մի բարձր ուսում ստացած անձն է և թէ ուրքան էլ նա սխալներ գործի, որքան էլ Ֆեոֆաներ հասցնի այդ ճիմարութեանը, այդ հասարակութեանը, — այնու ամենայնիւ մենք յարգելի պիտի համարենք նրա սխալները, նրա հաստացած ֆեոֆանի գէմ չը պիտի բողբոջենք, որովհետեւ նա բարձր ուսում ստացած անձն է...

Գտուածքը էր իրագործել նրանց: Տիրինք կարծիքով, աւելի հեշտ էր մասնագրական բռնապետի ձեռքից կորզել այդ երկիրները, քան թէ մի ուրիշը հայրը, որ մասնագրական ձեռքում գործիք գատնաւորով պիտի աշխատէր ամեն տեսակ ցած, անաղին և նեղկաւոր հարկեր գործ գնել մասնագրական իշխանութիւնը հայ երկրների վրա պահպանելու համար: Այդ հանդամանքները ի նկատի առնելով, տիկինը մէլքիքի Ֆրանցիլի ուրիշութիւնը աւելի վտանգաւոր էր համարում, քան թէ իր հօրը, մասնաւոր որ նա խոտացել էր իր աղջկիւր խմորին կնութեան տալ:

— Այդ առաջին անգամը չէ, տիկին, որ նա ընդունում է մասնագրականութիւնը, սասց ներքեւագետը ընդհանրակով Սկրբի լուս մտածութիւնները: — մէլքիքի Ֆրանցիլի իր մանկութեան հասակում գերի ընկաւ և տարվեցաւ Պարսկաստանի Սպահան քաղաքը: Այնտեղ Սպահանի արքայազուհիներից մէկը որդեգրեց նրան, և մի իմաստուն մօլլայի յանձնելով, կրթեց արաբական և պարսկական լեզուների դպրութեան մէջ: Գետոյ իր աղջկիւր նրան կնութեան տալով, նշանակեց նրան Սպահանի հայոց թաղի (Նոր Ջուզայի) բեյլէրը — բեյլի Անուհետեւ նա Սպահանի նախահօգում հայոց քաղաք և քամարս գաւառների կառավարիչը դարձաւ: Այդ բոլոր պաշտօնների մէջ ամենալավ, կողմնակալ ժողովրդին, մեծ հարստութիւն գրկեց: Սպահանի հայերը այն ժամանակ առեարական ընդարձակ յարաբերութիւններ ունենալով շնորհատանի հետ, իրանց կառավարողով առատ վարձատրում էին նրան: Բայց չարագործը հանգիստ չը մնաց: Նա դաւաճանեց մինչև անգամ այն պետու-

քաղաքագլխութիւնը սրան կամ նրան յանձնել այն, վերք է կղել պ. Յ. Օ.-ին, որ մենք յանդգնել էինք «Մշակի» միջոցաւ գրուածքներով պարսին իր ձրտուածութիւնը, որ մենք, ոչ թէ կուր, ինչպէս ասում է պարսնը, այլ մասնաւորաբար բանաւոր համար իրան նշանակութիւն չէինք տուել և զեկավար էինք ընտրել պ. Արիստոտել Յովհաննիսեանցին: Վայ այն հասարակութեանը, որ ձեռք պէս բարձր ուսում ստացած զեկավարներ պիտի ունենայ, պ. Յ. Օ., վայ այն աղբին, որ յոյրը գրել է այնպիսի հիւանդ գատուածքներով տեղաւորութիւններ իր վրա և իր փրկութիւնը այդպիսի առաջնորդների վրա և իր փրկութիւնը այդպիսի պարսները է սպասում... Այս ինչ խայտառակ միջոցի են ձեռք գցել մեր բարձր ուսում ստացած պարսները: Ի՞նչ կայ կայ, սասցէք խնդրեմ, մի մարդի գրուածքի և նրա կեանքի մէջ, որ պատուական մէջ կայ այդպիսի մի խայտառակ ձեռք, որ ընդունված լինի գրականական ասպարէզում փեմարանոյ կողմերի մէջ: Ի՞նչ կը լինէր, եթէ ես սկսելի գրել Յ. Օ.-ի թէ անցեալ և թէ մանաւանդ ներկայ կեանքի նկարագրողը: Բայց մենք թոյլ չենք տայ մեզ այդ աստիճան ստորանալ և նոյն զէնքով պատասխանել մեր հակառակորդներին, միայն պարտականութիւն ենք համարում մի թիթի քննողական հայացք գցել այդ բարձր ուսում առած պարսնի նամակին, որ իրան զազաւարատէր և մտաւորապէս զարգացած մարդ համարելով (որովհետեւ նա կարողացել է աւարտել աչքակապութեան ուսումը բժշկական ֆակուլտետում) մեզ թերուս պատանի է համարում:

Բայց այն լիրք ստերից, որ յօրինել է պարսնը մեր անձնաւորութեան վերաբերութեամբ, իրքն թէ մենք ցանկացել ենք տեղաւոր վիճակալին հօգուտ գրողի պատրաստականներում հայտնել լեզուի գատուած լինելը, որ և անցնողական գանձակով չընդունվեցանք, — նա սկսում է նկարագրել մեր այժմեան պարսպունքը, որ, պարսնի կարծիքով, արատաւորում է մեր պատիւը: Արդեօք օրն է լուս. պարսպել անձնական գործերով և մի և նոյն ժամանակ անտարբեր չը մնալ հասարակական և ազգային հարցերում, թէ բժշկական գիտութիւնից և հմտութիւններից զուրկ արտոգոտով մտնել խաւար հասարակութեան մէջ, թող փչել նրա աչքերը, միայն նիւթական շահերի ետեւից ընկնել, հարկաւոր եղած ժամանակ բոլորովին անպէտք լինել, անուշաղիլ թողնել ստանձնած պաշտօնը և միայն ջանալ ամեն միջոցներով գրասել աղէտ ամբոխը:

\*) Միթէ պարսնի նամակը կարգաւորց յետոյ չեն ամառկնում նրան պ. պ. տեսուչը, Մ. Արարաշահանցը, տէր Մինաս քահանայ և նոյնպէս հոգաբարձու Հայկազունին, որոնք իրանք էին զբաղի ինձ մօտ և առաջարկում ուստաց լեզուի գատուածութիւնը, բայց ես չէի կարողանում համաձայնվել նրանց առաջարկած պայմաններին:

Թեանք, որի շնորհիւ այնքան բարձր աստիճանի էր հասել: Գաղանի կերպով միանալով Լօտի և Բախտեարի կողմից վայրենի ցեղերի զլիսաւորների հետ, նա պատրաստեց մի սարսափելի արտոտմութիւն պարսից կառավարութեան գէմ: Նրա նպատակն էր յիշեալ վայրենիների աջակցութեամբ Սպահանի նահանգի հայաբնակ գաւառները անկախ դարձնել պարսից պետութիւնից, որ ինքը կարողանայ ժառանգաբար իշխել: Բայց ապատարութիւնը զպակցեալ և նա փախաւ, գնաց շնորհատան: Կրկար ժամանակ անցաւ Թեանի մէջ մնալով, վերջապէս վերադարձաւ իր հայրենիքը և կրկին ընդունեց քրիստոնէութիւնը: Այստեղ, ի հարկէ, ոչ ոք չէր կարող գիտնալ, թէ ինչ էր կատարել նա հետաւոր արեւելքում, և ընդունեցին նրան որպէս մի մարդ, որին բողբոջ յաջողացրել էր վերագառնող գերութիւնից: Եւ նա ինքը իր անցեալի մասին պահում էր խօրին ծածկամտութիւն:

— Իսկ դու որտեղից գիտես այդ բոլորը, հարցրեց տիկինը զարմանալով հետաքրքիր պատմութեան վրա:

— Ինձ հարողից մի գեղովը, որ բնակվում է խմորի մօտ, նա ինքը սպասանցի է, և ականատես է եղել բոլոր անցքերին: Նա շատ լուս մարդ է, և ինչպէս երևում է, մէլքիքի այժմեան վարմունքը նրան եւ տահաճութիւն է պատճառել:

— Եւ նրա մասին լսել եմ, ասում են լուս բժիշկ է:

— Նա ամեն բան գիտէ, ինչ ասես, որ նա չը գիտնայ:

— Բայց մի փոքր խարբերայ է:

քաղաքագլխի արժուր ձեռք բերելու համար, օրն է լուս...

Մեր զարմանում ենք, որ հիւրընկալութիւն են դառնում լրագրի մէջ այնպիսի նամակներ, որոնք մէկ կողմից պարզապէս ցոյց են տալիս թէ որքան խակ և հիւանդ կարծիքների տէր մարդիկ են թէ հեղինակը և թէ ինքն իմբագիրը: — Այժմ, երբ աշխատում են «Մեղու» ամենօրեայ դարձնել, միթէ նրա պրօզամը բաղկացած կը լինի ոչ թէ աղբային, քաղաքական և բանասիրական տեսութիւններից, այլ դանազան մարդկանց կեանքերի նկարագրերից, որոնց հեղինակները հարկաւ պիտի լինեն միայն «ուսում առած կիսանասերը»: Արեւմտ յայտնութիւն ենք ցանկանում այդ տեսակ լրագրին: Իսկ «Մշակը», մեր կարծիքով, աւելի լուս արած կը լինի, եթէ միանպաստն արձամարձի իր անուանի հակառակորդներին և բոլորովին անուշաղիլ թողնի նրանց ձայնը:

Սմբ. Պարսամեանց

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆԵՐՔԱՆԻՑ մեզ հետադրում են յունվարի 24-ից հետեւալը: «Նրէկ քաղաքային Գուսաւորացի գեներալ Տէր-Ղուկասովի յիշատակը յարգել նիտի ժամանակ ձայնաւորների վեր կենալով, բայց տարանց հողահանդիտ կատարել հանգուցեալի յիշատակին և «Գուբերնական» ասված փողոցը այսուհետեւ անուանել «Տէրղուկասովսկայա» փողոց: Նոյնպէս վճակեցաւ ցաւակցութեան հետազար ուղարկել հանգուցեալի կողմը:»

Յունվարի 14-ից մեզ գրում են թէ մեր խանուարացի որ օրիորդական գիմնադիտում սկսվեցաւ հայերէն լեզուի գատուածութիւն: Թեպէտ մինչև այժմ էլ կային կրօնագիտութեան դասեր չարաբել երկու անգամ, բայց որովհետեւ հայոց լեզուի համար ուսուցիչ չը կայ նշանակված, այդ պատճառով կրօնաւարաց քահանայ էլ չէր գնում հայերէնով պարսպելու: Իսկ այժմ պ. Սիմօն կրթիւնեանց յանձն առաւ ձրի, չարաբել երկու անգամ հայերէն լեզուից պարսպելու օրիորդներին հետ: Առ այժմ աշակերտութիւնը եօթն են: Նոյն տեղից մեզ գրում են, որ մինչև յունվարի 10 լուս եղանակ էր տեսն, իսկ այժմ սաստիկ ցուրտ է լինում և ձիւնը չարունակում է գալ:

Մեզ հարողում են, որ յունվարի 21-ին թիֆլիսի Հաւարար թաղում գանձված էլքիմանցից եկեղեցու դուռը կոտրել են անյայտ աւաղակները, տարել են 3 հաս սկիհ և գանձանակի մի քանի փակված արկղեր:

— Ես էլ առաջ այդ կարծիքն ունէի նրա մասին, տիկին, մասնաւոր կերպով տեսնում էի, որ անդապար գործարներ է պահանջում խմորից նրա համար «մաջուն» շինելու, և մտածում էի, որ այդ թանգազին իրեղիչները առաւելապէս իր դրամի համար է: Բայց նա պարզ խոտուովս վեցաւ ինձ, թէ «բժշկութիւնը պարսիկների մէջ պէտք է ծածկված լինի գերբնական քօղով, և այդ աւելի ներդրում է նրանց երեակայութեան վրա: Հասարակ բանին նրանք նշանակութիւն չեն տալիս: Եթէ ես ստէի խմորին, թէ քր զարմանները պիտի պատրաստեմ այս և այն խոտից կամ արմատից, նա ոչնչի տեղ կընդունէր, բայց ալմաստը, մարդաբոլոր, կարող է և այլն, կարող են աղբիլ խմորի մասնաւորութեան վրա: — Առհասարակ, աւելացրեց ներքեւագետը, — ես այդ մարդու մէջ դանում եմ մի խորհրդաւոր գաղտնիք, որը նա ամենայն գոուածութեամբ թաղցնում է:

— Կերվիչները միշտ այդպէս են լինում, պատասխանեց տիկինը անուշաղիլ կերպով և կըմկին ընկա մտածութիւնների մէջ:

— Իսկ ես դերվիչի պատմութիւնից կամեում եմ մի օգուտ քաղել, դուք ինչ խորհուրդ կը տաք, տիկին:

— Ի՞նչ օգուտ կապելի է քաղել:

— Ես կամեում եմ գնալ խմորի և խմորի մօտ յայտնել նրանց մէլքիքի անցեալը, — յայտնել թէ ինչ էր արել նա Սպահանի կողմերում, յայտնել նրա գաւառականութիւնները պարսից կառավարութեան գէմ, յայտնել, որ նա մի վատ խարբերայ է, թէ նա այդ երկրորդ անգամ է, որ ընդունում է մասնագրականութիւն, դարձեալ